ՍԻՌԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀՈՒՄԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԼԻԱՐԺԵՔ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Մեր օրերում դժվար է դաստիարակության գործը, որովհետև փոխվել են արժեքները, շատ դրական արժեքներ կորսվել են, շուկայական հարաբերությունները փոխել են ընտանիքի, դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը, դպրոցում, շատ հաճախ էլ ընտանիքում քարոզվում են այլ գաղափարներ, մինչդեռ իրական կյանքում աշակերտը բախվում է այլ երևույթների, գաղափարների, բարքերի հետ: Արտադրական նոր հարաբերությունները իրենց ետևից բերեցին ինչպես դրական, այնպես էլ բացասական երևույթներ: Օրինակ, անխնա, անառողջ մրցակցություն, որն ավելի շատ հատուկ է գայլային, քան մարդկային օրենքներին, սեփական շահը հասարակականից բարձր դասելու, միմյանց խաբելու, խոսքի և գործի անհամապատասխանություն, բռնությամբ, ուժով, փողով սեփական հարցերը լուծելու և այլ երևույթներ: Ցավոք, բացասական նման երևույթներ մտան նաև դպրոց և ընտանիք: Ոչ բոլոր դպրոցներում և ընտանիքներում է հոգեբանական մթնոլորտը առողջ: Ոչ բոլոր դպրոցներում և ընտանիքներում են գիտակցում երեխայի համար առողջ ֆիզիկական և հոգեբանական միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը: Ոչ բոլոր ընտանիքներում և դպրոցներում են հաշվի առնում էրգոնոմիկայի, գունահոգեբանական, գեղագիտական պահանջները, ինտերյերի ֆունկցիոնալ նշանակությունը և դրանց ազդեցությունը երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակի վրա: Նման պայմաններում անչափ կարևորվում է աշակերտների միջավայրի հումանացման խնդիրը: Միջավայրը լինելով կրթության և դաստիարակության կարևոր գործոններից մեկը, մեծապես ազդում է երեխայի աճի և ինքնազարգացման վրա: Ճիշտ կազմակերպված միջավայրը օգնում է երեխային ձևավորել որպես անձ, հետագայում նաև որպես անհատականություն: Ուստի, հումանացնել դաստիարակության գործընթացը նշանակում է. 1. Հումանացնել նաև երեխայի միջավայրը, այսինքն երեխայի ֆիզիկական և հոգեկան գոյության ու զարգացման համար ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ: 2. Գիտակցել, որ երեխայի միջավայրի հումանացման մակարդակից է նաև կախված մանկավարժական ազդեցության արդյունավետությունը, դպրոցի հոգեբանական մթնոլորտի բարենպաստ լինելը, ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքն ու վարքը:

«Դպրոցը և հասարակությունը» գրքում Ջ.Դյուին բացատրեց միջավայրի դերը անձի կրթության գործում և հիմնավորեց դպրոցը որպես երեխայի կյանքի և զարգացման միջավայր դիտարկելու անհրաժեշտությունը: Նա նշում է, որ դպրոցը պետք է լինի «Մանկավարժական միջավայր»: Այդ դեպքում «Մենք դաստիարակում ենք ոչ թե ուղղակիորեն, այլ միջավայրի միջոցով» Նա առանձնացնում է դպրոցին հատուկ 3 գործառույթ: Դպրոցը պետք է 1.ստեղծի պարզեցված միջավայր, 2.աճող անհատին պաշտպանի սոցիալական միջավայրի անբնդունելի գծերից, 3.փոխհատուցի սոցիալական միջավայրի անցանկալի ազդեցությունները. յուրաքանչյուր մարդու հասար ստեղծի հնարավորություններ այն սահմանափակումները հաղթահարելու համար, որոնք իր վրա ի ծնե դրել են որոշակի փոքր խմբի պատկանելիությունը և տա նրան ավելի լայն շրջապատի հետ շփվելու հնարավորություն/5, 89/: Փաստորեն Դյուին մշակեց կրթության այնպիսի մի մոդել, որտեղ մարդու անհատական զարգացումը և սոցիալիզացիան ներդաշնակվում և լրացնում են միմյանց:

Հայ մանկավարժության մեջ երեխայի միջավայրը հումանացնելու, դրա թողած բացասական ազդեցությունը չեզոքացնելու և մանկավարժական ազդեցությունը ուժեղացնելու հարցին անդրադարձել են մասնավորապես Բահաթրյանը, Լ.Շանթը և ուրիշներ:

Ի՞նչ է նշանակում հումանացնել երեխայի միջավայրը: Ըստ Կոիլովայի դա նշանակում է Ավագների և մանկական կոլեկտիվների համագործակցության ապահովում + համամարդկային և ազգային արժեքների մասին ինտեգրված գիտելիքներ և դրանց նկատմամբ վերաբերմունքի դաստիարակություն + անձնա-կողմնորոշիչ դաստիարակություն /երեխայի հետաքրքրությունների, պահանջմունքների, հակումների և պոտենցիալ հնարավորությունների հաշվառում և դրանց իրականացման համար պայմանների ստեղծում/ 6,19/:

Մեր կարծիքով, կրթական հաստատության տարածքի հումանացում ասելով պետք է հասկանալ ուսումնական հաստատության տարածքում և նրա շուրջը գտնվող նյութատեխնիկական, նշանա-սիմվոլային, տեղեկատվական և հոգեբանամանկավարժական պայմանների ամբողջությունը, որոնք ազդում են երեխաների ու մեծահասակների և մշակութային զարգացման, և ինքնազարգացման վրա.

Որո՞նք են ուսումնական հաստատությունում դպրոցում, երեխայի միջավայրի հումանացման մանկավարժական պայմանները.

1.երեխային շրջապատող միջավայրի կազմակերպումը կրթության և դաստիարակության հիմնական կարևոր խնդիրներից մեկը համարելը, գիտակցելը և ընդունելը.

2. ճիշտ կազմակերպված միջավայրը, որպես անձի և հետագայում որպես անհատականության ձևավորման միջոցներից մեկը դիտելը,

3. Երեխայի դիմադրության անթույլատրելիությունը և երեխայի ինքնատիպության պահպանումը որպես մանկական տարածքի հուճանացման կարևոր ուղղություն ընդունելը,

4. ամբողջական հանրակրթական տարածքի, հիմնական և լրացուցիչ կրթության, դասարանական և արտադասարանական գործունեության հուճանացման ապահովումը և այդ տարածքում մշակութաստեղծագործական միջավայրի ստեղծումը, որը նշանակում է

• առարկա-տարածքային այնպիսի միջավայրի կազմակերպումը, որը ապահովի աշակերտի նորմալ ֆիզիկական և հոգեբանական առողջությունը /դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել էրգոնոմիկայի, գունահոգեբանական, գեղագիտական պահանջները, ինտերիերը պետք է համապատասխանի ֆունկցիոնալ նշանակությանը, ապահովի հոգեբանական միջավայր, առաջացնի գեղագիտական զգացում, բավարարի տեղեկատվական պահանջմունքը և նպաստի աշակերտի հոգևոր, մտավոր զարգացմանը, երևակայության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, երեխային մղի ակտիվության, ապահովի երեխայի և բնության միասնությունը և ստեղծի անհատական հարմարավետության զգացում/,

• հումանիտար ցիկլի առարկաների կաբինետները ձևավորելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք պահանջում են լայն, տարածքային միջավայր՝ կոմպլեքսները և ճնշումները հանելու համար: Դա կօգնի աշակերտներին՝ ինքնավստահ, հանգիստ լինել, անկաշկանդ, ազատ արտահայտել սեփական տեսակետներն ու կարծիքները,

• բնագիտական ցիկլի առարկաների կաբինետները ձևավորելիս հարկ է հիշել, որ դրանք պետք է աշխատեն տարբեր համակարգերում /մարդ-մարդ, մարդ-բնություն, մարդ-տեխնիկա-գիտություն, մարդ-նշան և այլն/, երբեմն էլ միաժամանակ բոլոր համակարգերում: Այնպես որ ուսուցիչը պետք է ծանոթ լինի էրգոնոմիկայի կանոններին,

• «առարկայի էգոիզմի» հաղթահարումը,

• այն բանի գիտակցումը, որ դպրոցական շենքերի ճարտարապետությունը, ներքին կառուցվածքը, կահավորումը և գունային լուծումների որոշումը ազդում են դպրոցի հոգեբանական ողջ մթնոլորտի, ուսման նկատմամբ երեխաների վերաբերմունքի, վարքի վրա. ուստի դրանց վերաբերյալ որոշումները պետք է կայացնել ելնելով երեխաների հարմարավետության, անվտանգության և նրանց վարքի վրա թողնելիք ազդեցությունից: Գիտնականները իրավամբ գտնում են, որ տաք կամ սառը գույները ազդում են նույնիսկ սենյակի ջերմաստիճանի վրա: Նրանք պնդում են, որ դպրոցական այն շենքերը, որոնց ճարտարապետությունը հարմարավետ է, ճիշտ է լուծում սոցիալական հաղորդակցման և հասարակական վայրերի՝ սպորտ-դահլիճի, գրադարանի և այլն կառուց-

վածքը, դրական ազդեցություն է թողնում երեխաների վրա, հետագայում փոքրացնում է ագրեսիվ վարքի և վանդալիզմի հնարավորությունը:

5. Դպրոցում երկխոսական մանկավարժական գործունեության ապահովումը:

6. Ընտանիքում և դպրոցում արտաքին բարենպաստ միջավայրի, երեխայի հոգեկան և բիոլոգիական գոյության և զարգացման համար /սնունդ, հագուստ, կահույք, ուսումնական և կրթական այլ միջոցներ/ պայմանների ստեղծումը:

7. Ավագների և երեխաների համատեղ ակտիվություն ապահովելու նպատակով ընտանիքում և դպրոցում մարդկայնացված միկրոսոցիալական միջավայրի ստեղծումը /հումանիստական հարաբերություններ, շփում, հոգեբանական առողջ մթնոլորտ, միասնական ստեղծագործական, աշխատանքային գործունեություն և այլն/:

8. Դաստիարակչական սուբյեկտների փոխգործունեության, հանդուրժողականության և ուսումնական հաստատությունում ընտանեկան հոգեբանական մթնոլորտի, հարմարավետության հաստատում:

9. Դպրոցում և ընտանիքում շրջապատող միջավայրի կայունության, դինամիկության ապահովում երեխայի ճաշակի, տրամադրության, մանկավարժական տարբեր խնդիրներին համապատասխան:

10. Երեխայի համար դպրոցը «դպրոցը իմ տունն է» գաղափարին համապատասխանեցնելը:

11. Դպրոցը համայնքի մշակութամանկավարժական կենտրոն դարձնելը, ընտանիքի, հասարակության հանդեպ բաց լինելը ապահովելը:

12. Մանկավարժական կոլեկտիվը որպես համախոհների և միասնական մանկավարժական պահանջներ ունեցող և դնող խումբ դիտելը և կայացնելը:

13. Մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների առողջ համագործակցության և դպրոցի, ծնողների ու համայնքի փոխաջակցության ապահովումը:

14. Դպրոցում և դպրոցից դուրս գործող մանկական միավորումների և աշակերտական ինքնավարության մարմինների ու դպրոցի գործունեության համաձայնեցումը:

15. Դպրոցում և ընտանիքում շփման բարձր և առողջ մակարդակի ապահովում և ազատ շփման, փողոցի ազդեցության չեզոքացման մանկավարժական վարպետության առկայությունը /ինչքան մեծանում է մարդը, այնքան մեծանում է նրա շրջապատը: Մարդու հոգեբանական զարգացումը /կրթությունը, արժեքները, նորմերը, սովորությունները, վարվելակերպը, նրա ամբողջ կյանքի ոճը կախված է նրա շփման աստիճանից, շրջապատի մեծությունից: Եվ որքան շատ է շփվում մարդը, այնքան շատ բան է իմանում իր մասին, այնքան

պատրաստ է համագործակցության, ինքնավստահ է դառնում, որն ավելի մեծ տարիքում վերածվում է ինքնագնահատման/:

16. Երեխայի մեջ անձնային այնպիսի որակների ձևավորումը, որոնք ընդունակ լինեն դիմակայել ոչ միայն սոցիալական շրջապատի, փողոցի վատ ազդեցություններին, այլև այն փոխելուն:

Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ երեխայի լիարժեք զարգացման համար անհրաժեշտ է, որ նրա կենսագործունեության ողջ միջավայրը հումանիստական ուղղվածություն ունենա: Դպրոցից առավել ընտանիքն է երեխայի կենսագործունեության միջավայրի գլխավոր գործոնը: Ընտանիքում է երեխան ծնվում, ձևավորվում որպես անձ ընդունելով իր ընտանիքի մշակույթը և դրա միջոցով նաև տվյալ հասարակության մշակույթը: Երեխայի լիարժեք զարգացման համար մեծ նշանակություն ունեն հետևյալ հարցերը: Որքանով է ընտանիքը լիարժեք կատարում իր գործառույթները, որքանով դրական դաստիարակչական ազդեցություն են թողնում երեխաների վրա այն գործոնները, որոնք ձևավորում են անձը ընտանիքում:

Ինչո՞վ դպրոցը կարող է ընտանիքին օգնել երեխաների դաստիարակության, զարգացման և ձևավորման գործում, ի՞նչ կարող է անել դպրոցը երեխայի ընտանեկան միջավայրը հումանացնելուն նպաստելու համար:

1. Ծնողների հետ աշխատանքը կառուցել հետևյալ նախադրյալների հիման վրա.

- որքան փոքր է երեխան, այնքան նա չի կարող մասնակցել ընտանիքի ապրելակերպի ձևի ընտրությանը
- վարքագծային հիմնական սովորությունները երեխայի մոտ ձևավորում են ծնողները, ընտանիքի մյուս անդամները
- ընտրելով ապրելակերպի այս կամ այն ձևը, ծնողները պատասխանատվություն են կրում ոչ միայն իրենց, երեխաների, այլև ապագա թոռների առողջության, դաստիարակության, զարգացման համար:

2. Ծնողների և երեխաների հետ զրույցների, թեստերի, տնային այցելությունների միջոցով պարզել ծնողների մանկավարժական-հոգեբանական գիտելիքների, ունակությունների մակարդակը, ընտանեկան դաստիարակության, սեփական փորձի, պատրաստակամության, անձնական կուլտուրայի և կրթվածության աստիճանը, կոնֆլիկտները հարթելու նրանց կարողությունը:

3. Դպրոցում ստեղծել մանկավարժահոգեբանական գիտելիքների տարածման կամ ծնողական հանդիպումների ակումբ, որի բովանդակությունը կառուցել նախորդ կետում արված ուսումնասիրությունների արդյունքների վրա: Օրինակ, ակումբի առաջին հանդիպման ժամանակ կազմակերպել «Իմ ընտանիքը» երեխաների նկարների ցուցահանդես: Ծնողների ուշադրությունը սևեռել նրա վրա, թե երեխաները ում և ինչպես են նկարել, դա ընտանեկան

հարաբերությունների իրենց ընկալումն է: Ասենք, ով է ընտանիքի ղեկավարը և այլն:

4. Օգնել ծնողներին.

Ա/ Գիտակցել, որ ընտանիքը երեխային պետք է ընդունի որպես մարդ և ոչ թե ծնողների մասնիկը, որ մանկությունը երեխայի կյանքն է և ոչ թե ապագա կյանքին նախապատրաստող ժամանակաշրջան, որ երեխան ունի իր հետաքրքրությունները, հակումները, պահանջմունքները և անմիջականորեն իրեն վերաբերող հարցերի քննարկման և որոշման գործում ձայնի իրավունք ունի:

Բ/ Ընտանեկան դաստիարակությունը կառուցել հետևյալ սկզբունքներով.

- աճող մարդու նկատմամբ մարդասիրության ու գթասրտության
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերություններ հաստատելու
- երեխային ընտանեկան կենսագործունեության մեջ ընդգրկելու
- երեխային օգնելու պատրաստակամության
- երեխայի անվտանգության զգացման ապահովման
- բռնությունների, ֆիզիկական պատիժների բացառման
- երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման /սեփականության իրավունք իր սենյակը, իր նամակը, իր անկյունն ունենալը/ և ընտանիքում առողջ մթնոլորտ ստեղծելու
- երեխային սիրելու և նրան զգացնել տալու, որ ինքը սիրո արդյունք է և իր ծնունդը ուրախություն է պատճառել ընտանիքի բոլոր անդամներին գաղափարներով:

Գ/ Ընտանիքի խնդիրները տեսնել երեխայի մանկությունը երջանիկ դարձնելու, «ես»-ի զարգացման համար մաքսիմալ պայմանների ստեղծման, երեխայի սոցիալ-տնտեսական, հոգեբանական, ֆիզիկական պաշտպանվածության, առողջության ապահովման, ինքնազարգացման, ինքնավարության ունակությունների դաստիարակության մեջ:

Դ/ Որպես ընտանեկան դաստիարակության մեթոդներ որդեգրել անձնական օրինակի, քննարկման, վստահության, սիրո, ապրումակցման, հումորի, անձի արժևորման, հանձնարարության, վերահսկողության, ավանդույթների, գովելու, ցավակցելու և անձը չվիրավորող և չոտնահարող այլ մեթոդներ:

Ե/ Հոգեբանական և առողջապահական գիտելիքներ ձեռք բերել ընտանեկան կոնֆլիկտները հարթելու, հիվանդ, հատուկ կարիք ունեցող երեխաներին արագ հայտնաբերելու, նրանց հասարակությունից չօտարացնելու այլ հասարակության մեջ ինտեգրելու համար:

Զ/ Հասկանալու, որ ոչ ներդաշնակ ընտանիքը կամ «դժվար» ընտանիքը ռիսկի գործոն է երեխաների անձի զարգացման համար, քանի որ նման ընտանիքներում երեխան երբեք վստահ չէ, որ կարող է անհրաժեշտության

դեպքում աջակցություն գտնել և այս տիպի ընտանիքներում երեխաներն ունենում են ցածր ինքնագնահատում, /բոլոր գործերում առաջինը լինելու կպչուն ձգտում, մարդկանց նկատմամբ արհամարհանք, մեղավորություն, ամոթի, վախի, մերժված լինելու, անվստահության զգացում, իրենք իրենց և այլ մարդկանց հասկանալու անկարողություն: Այդ երեխաները չեն հավատում, որ իրենց նկատմամբ կարող են լինել բարյացակամ, իրենց կարող են վերաբերվել բարեկամաբար, սիրել, չեն կարողանում անկեղծ լինել իրենց հասակակիցների և մեծերի հետ, չեն վստահում ոչ մեկին, կեղծում են, ստում, որպեսզի ծածկեն ընտանեկան հարաբերությունները/:

Դաստիարակության վրա փողոցի ազդեցությունը հայտնի է հինավուրց ժամանակներից: Այն մեծ ազդեցություն է թողնում աճող և ձևավորվող մարդու վրա: Ուստի, դաստիարակությունը չի կարող հաշվի չառնել փողոցի որպես երեխային շրջապատող միջավայրի ազդեցությունը: Դաստիարակության խնդիրն է հաշվի առնել փողոցի ազդեցությունը, սովորեցնել երեխային ոչ միայն փողոցում ինքնահիրացվել, այլև դիմակայել բացասական ազդեցություններին առանց դեֆորմացնելու սեփական դրական որակները: Միջավայրի մանկավարժությունն իրավացիորեն գտնում է, որ հնարավոր չէ երեխային մեկուսացնել փողոցից, դա պետք էլ չէ անել, որովհետև այն հղի է լուրջ դժվարություններով: Փողոցից երեխային մեկուսացնելը հետագայում դժվարացնում է անձի շփումը այլ մարդկանց հետ: Նման երեխաները փողոցում տարբեր իրավիճակներում իրենց վստահ չեն զգում, չեն հասկանում ինչ է կատարվում իրենց շուրջը, չեն կարողանում այս կամ այն երևույթներին արձագանքել: Այս ամենի հետևանքով նրանք կարող են դառնալ հանգամանքների, այլ մարդկանց բացասական ազդեցության զոհ:

Ս.Տ.Շացկին խորհուրդ է տալիս ուսումնասիրել և մանկավարժեցնել միջավայրը: Այսինքն, միջավայրի տարերային և բացասական ազդեցությունները վերածել մանկավարժական նպատակաուղղված, կազմակերպված, կառավարվող գործոնի: Լ.Շանթի տերմինով, անկազմակերպ դաստիարակությունը վերածել կազմակերպված դաստիարակության գործոնի: Շացկին գտնում է, որ միջավայրի մանկավարժեցման էությունը դրա մանկավարժական ներուժի հայտնաբերման և զարգացման մեջ է, շրջապատի, բնակչության հետ մշակութաստեղծագործական աշխատանք տանելու, միջավայրի բոլոր սուբյեկտների դաստիարակչական ջանքերը համախմբելու, սոցիոմշակութային յուրատեսակ տարածք ստեղծելու մեջ է:

<u>Ինչպե՞ս կարող է դպրոցն ազդել փողոցի վրա:</u>

1.Դպրոցը միկրոշրջանի մշակութային կենտրոն դարձնելով: Դրա համար անհրաժեշտ է միկրոշրջանի բոլոր դպրոցական երեխաներին ընդգրկել հանրակրթության մեջ, դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը և թաղի երեխաների կապը դպրոցի հետ: Դպրոցը բաց

անել միկրոշրջանի բոլոր երեխաների համար: Դպրոցի ողջ նյութատեխնիկական բազան մատչելի դարձնել նրանց համար /գրադարան, սպորտ-դահլիճ, համակարգչային դասարան, խմբակներ և այլն/:

2. Ապահովել դպրոցի ծնողական համայնքի, անչափահասների գործերով զբաղվող խորհուրդների, միկրոշրջանում գործող բոլոր մանկական միավորումների, կենտրոնների, արտադպրոցական հիմնարկների միջև կապը:

3. Յուրաքանչյուր դպրոցում ստեղծել հոգեբանական և սոցիալական ծառայություններ կամ ունենալ պրոֆեսիոնալ, իրազեկ, երեխաների համար հետաքրքիր և երեխաներին գրավել կարողացող դպրոցական հոգեբան և սոցիալական ծառայող: /Ի դեպ, դա կրթության զարգացման 2001-2005թթ. ծրագրի պահանջներից մեկն է եղել, որը չի իրականացվել մինչև օրս/: Շատ կարևոր են հոգեբանի և սոցիալական աշխատողի անձնային որակները: Նրանք պետք է լինեն անկեղծ, /այլապես երեխաների հետ երկխոսություն չի կայանա/, բնական, կարողանան լսել երեխաներին, հասկանալ նրանց, հարգեն երեխայի արժանապատվությունը, վստահեն նրան, հաշվի նստեն նրա հետաքրքրությունների և պահանջմունքների հետ:

4. Դպրոցի բոլոր երեխաների ազատ ժամանակը կազմակերպելու և նրանց փողոցից կտրելու համար ստեղծել ըստ հետաքրքրությունների ակումբներ, խմբակներ, մշտապես կազմակերպել տարբեր միջոցառումներ, հանդիպումներ միկրոշրջանի անվանի մարդկանց հետ, շաբաթօրյակներ՝, դպրոցին հարող փողոցները մաքրելու համար, մրցույթներ «Հայրենիքը սկսվում է իմ փողոցից» և այլ թեմաներով: Երեխային ընդգրկել համայնքի համար կարևոր ծրագրերի իրականացման գործում: Այս ամենը կօգնի երեխային ինքնահիրացվել, չվախենալ փողոցից, հակառակը, իրեն զգալ իր միկրոշրջանի տերը, ճանաչել միկրոշրջանում ապրող մարդկանց, հաստատել իր «ես»-ը:

5. Դպրոցում ստեղծել դասղեկների մշտական գործող դպրոց նրանց հոգեբանական և սոցիալական գիտելիքները մշտապես խորացնելու և կատարելագործելու համար:

6. Ապահովել դպրոց-ընտանիք, դասղեկ-ծնող ամուր կապ: Կազմակերպել ծնողների պարբերաբար այցելություններ դպրոց և դասղեկների այցելություններ աշակերտի տուն: Դասղեկի կողմից դասարանի բոլոր սովորողների ազատ ժամանակի կազմակերպման հարցերը ուսումնասիրել և հարկ եղած դեպքում ձեռնարկել այդ ժամանակը լցնելու կոնկրետ քայլերի ձեռնարկում աշակերտի և ծնողի հետ խորհրդակցելով:

7. Երեխաների մեջ ձևավորել անձնական այնպիսի որակներ /հանդուրժողականություն, ոչ ասելու կարողություն, խոչընդոտներին դիմակայելու և դրանք հաղթահարելու կարողություն, համոզելու, սեփական կարծիքը պաշտպանելու և այլն/ որոնք կօգնեն երեխաներին ոչ միայն դիմակայելու

միջավայրի վատ ազդեցություններին, այլև ուժ ունենալու՝ դրանք փոխել և նույնիսկ արմատախիլ անել:

8. Փողոցի վրա ազդելու դրական եղանակներից մեկն էլ պատանեկության ծայնը հաշվի առնելն է և սովորողներին համայնքի ծրագրերի և զարգացման նախագծերի մեջ ներգրավելու գործընթացն է: Պատանիները կարող են հանդես գալ և՝ որպես պլանավորողներ /պարզել համայնքի կարիքները, կազմել գործունեության պլան, հավաքագրել կամավորների/ և որպես վերապատրաստողներ /հասակակիցներին ծանոթացնել համայնքի ծրագրերի հետ և պարզել նրանցից ովքեր ո՞ր ծրագրերում կարող են մասնակցել/ և որպես գնահատողներ /իրականացնել հարցումներ, վարել հարցազրույցներ և պարզել ծրագրի արդյունավետությունը կամ ընտրել ներկայացված ծրագրերից լավագույնը/:

Ժամանակակից աշխարհում դպրոցը ստիպված է հաշվի առնել և չեզոքացնել ոչ միայն փողոցի, այլև տեղեկատվության ազդեցությունները: Այս իմաստով շատ կարևոր է ՁԼՄ-ների և տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, որոնք ձևավորում են հասարակական կարծիքը և անձի ու մասսաների վրա ազդելու հսկայական հնարավորություն ունեն: Շատ դեպքերում նրանք դառնում են աճող սերնդի համադաստիարակներ, նրանց աշխարհայացքը ձևավորողներ, նրանց ակտիվ գործունեության մղողներ: ՁԼՄ-ները երեխայի վրա կարող են թողնել ինչպես դրական, այնպես էլ բացասական հետք, կարող են նույնիսկ դեֆորմացնել անձին: Այսօրվա երեխաների մեծ մասը 2-4 ժամ անցկացնում են հեռուստացույցի առջև, այդքան և ավելի համակարգչի առջև: Իհարկե, տեղեկատվական միջոցների շնորհիվ նրանք շատ բան են իմանում մեծահասակների կյանքի, նրանց վարքի մասին և սկսում են կատարել մեծահասակներին հատուկ սոցիալական դերեր: Շատ դեպքերում երեխաները նույնացնում են իրենց համակարգչային խաղի հերոսի հետ, ապրում են նրա ուրախությունն ու տխրությունը, կրում են նրա բարությունը կամ ագրեսիվությունը և այլն: Եվ այս ամենը հետք է թողնում երեխայի գործողությունների, վարքի, աշխարհայացքի վրա և ունենում հոգեբանական, ֆիզիոլոգիական հետևանքներ, ուստի գիտակցելով անգամ, որ տեղեկատվությունն ստանալը անձի սոցիալական զարգացման բնական միակ միջոցն է, որ յուրաքանչյուրն ունի տեղեկատվական պահանջմունք և տեղեկատվություն ստանալու իրավունք, որ տեղեկատվությունը մարդու սոցիալական ակտիվության և ինքնաիրացման գործոն է, այնուամենայնիվ, դպրոցի խնդիրն է՝ ՁԼՄ-ների հնարավորություններն օգտագործել մանկավարժական նպատակներով՝ երեխայի մեջ ինֆորմացիոն-մանկավարժական մշակույթ ձևավորելու նպատակով:

Դպրոցը պարտավոր է ծանոթացնել և սովորեցնել երեխային ՁԼՄ-ների տարբեր տեսակների հետ, օգնել նրանց մեջ ճիշտ ընտրություն կատարելու՝ ելնելով նրանց բովանդակությունից, որակից, տեղեկատվության ծավա-

լից, ինքնակրթության և ինքնադաստիարակության նպատակով տեղեկատվությունն օգտագործելու նպատակահարմարությունից: Դպրոցը ընտանիքի հետ միասին պետք է վերահսկի երեխաների վերաբերմունքը ինֆորմացիոն համակարգերի, ծրագրերի նկատմամբ, պիտի կարողնա դրանք մանկավարժորեն ճիշտ օգտագործել ուսուցման և դաստիարակության գործում: Այլ խոսքով, դպրոցը պետք է օգնի ընտանիքին՝ երեխայի տեղեկատվական միջավայրի մանկավարժականացման գործում, այսինքն՝ ծնողներին և երեխային սովորեցնի մանկավարժորեն գրագետ օգտագործել ԶԼՄ-ները՝ և հակառակը՝ կանխարգելել դրանց բացասական ազդեցությունները: Այս հարցում իրենց առանձնակի դերն ունեն նաև դասղեկը, տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչները:

Երեխայի միջավայրի գործոններից մեկն էլ <u>բնությունն է:</u> Դպրոցի կարևոր խնդիրներից մեկը երեխայի մեջ բնության նկատմամբ սեր արթնացնելն է, բնությունը պահպանելու և խնայելու ունակություններ ձևավորելը:

Ներկա դարաշրջանում երեխայի միջավայրը հումանացնելու համար դպրոցը պետք է ստեղծի հավասար հնարավորություններ: Երեխաների հիմնախնդիրների կարգավարումը միջազգային հանրությունը պայմանավորում է իրավական մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությամբ այն հաշվով, որ յուրաքանչյուր երեխայի համար ստեղծվեն հավասար հնարավորություններ: Ինչպես նշել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գործադիր տնօրեն Քերոլ Բելլամը 2003 թվականին իր Զեկույցում, գործողությունների նշանաբանը պետք է լինի. «Յուրաքանչյուր երեխային առողջություն, կրթություն, հավասար հնարավորություններ և պաշտպանություն»: Ակնհայտ է, որ միայն վերոնշյալի ապահովմամբ է հնարավոր հասնել <u>հումանիստական</u> <u>աշխարհի</u>՝<u>«երեխաների</u> <u>համար</u> <u>հարմար</u> <u>աշխարհի»,</u> <u>«երեխաների</u> <u>կյանքի</u> <u>համար</u> <u>պիտանի</u> <u>աշխարհի</u> <u>ստեղծմանը:</u> Ուսումնասիրելով վերջին 10-15 տարիներին երեխաների կրթության և առողջապահության, նրանց այլ իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը նվիրված համաշխարհային կոնֆերանսների, ֆորումների նյութերը /Ջոմթիեն-1990թ., Սալամանկա-1994թ.,Դակար-2000թ., Սարաևո-2004թ., ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեա-2001թ./ «Հազարամյակի մարտահրավերների դեկլարացիան», տեսնում ենք, որ ամենուր շեշտվում է յուրաքանչյուր պետության կողմից «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի» պահանջների կատարման ապահովումը սկսած համայնքային կառույցներից և դպրոցից մինչև պետական կառավարման բարձրագույն մարմիններ: Այլ հարցերի թվում նշվում են հետևյալ մոտեցումները.

ա/ Երեխայի ծայնը պետք է լինի լսելի

բ/ Երեխան պետք է մասնակցություն ունենա իր կյանքի կազմակերպմանը և իր չափով այլ հարցերի

գ/ Երեխան պետք է նախապատրաստվի կյանք մտնելու, սակայն այդ «նախապատրաստական շրջանն» էլ է նրա կյանքը

դ/ Երեխան պետք է ընդգրկվի ակտիվ ուսումնառության մեջ

ե/ Երեխան չպետք է տուժի հակամարտություններից և ճգնաժամերից

զ/ Երեխաների կյանքը պետք է անընդհատ բարելավվի,

է/ պետք է պայքարել երեխաների օտարացման, մեկուսացման դեմ, քանի որ երեխան միայն համապատասխան կենսական միջավայրի առկայության դեպքում կարող է լիարժեք զարգանալ և ինքնադրսևորվել:

Միևչդեռ, այսօր սոցիալական բևեռացումը, տնտեսական անհավասարությունը բացասաբար է ազդում երեխաների ձևավորման վրա: Պետությունը պարտավոր է չեզոքացնել տնտեսական և սոցիալական պայմանների բացասական ազդեցությունը: Մեր հանրապետությունում այդ ուղղությամբ որոշ քայլեր արվում են /«Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագիրը, աշակերտության 8 տոկոսը անվճար դասագրքեր է ստանում, տարրական դպրոցի դասագրքերը անվճար են և այլն/ սակայն դրանք խիստ անբավարար են հարցին լուծում տալու համար: Պետությունը պետք է հաստատի և ապահովի ֆիզիկական և բարոյական բարեկեցության համար անհրաժեշտ մինիմումը, ստեղծի երեխայի զարգացման համար պայմաններ, լուծի մանկության պահպանման հիմնախնդիրները: Միևչդեռ մեզանում, մասնավորապես կրթությունը ֆինանսավորող մարմիններում՝ մանկապարտեզ, արտադպրոցական հիմնարկ ունենալը, համարվում է ճոխություն, նրանց համար երեխան պետք է վճարի:

Ժամանակակից աշխարհում լավ դպրոցից պահանջվում է ոչ միայն կրթության որակ տալ, այլև դպրոցը դարձնել երեխաների կյանքի համար պիտանի, այսինքն պայքարել երեխաների մեկուսացման դեմ:

Ինչ է նշանակում սոցիալական մեկուսացում, ո՞րն է կրթության դերն այդ հարցում և որոնք են դրա դեմ պայքարելու ձևերը:

Սոցիալական մեկուսացում հասկացությունը մեծ մասամբ որոշվում է «սոցիալական, տնտեսական, մշակութային կյանքին ակտիվ մասնակցելու անկարողությամբ», որը հանգեցնում է հասարակության հիմնական մասից հեռանալուն, օտարանալուն:

Եթե նայելու լինենք սոցիալական մեկուսացմանը մարդու իրավունքների տեսանկյունից, ապա վերոհիշյալին ավելանում է նաև ևս մի ասպեկտ քաղաքացու քաղաքացիական, քաղաքական, սոցիալական իրավունքներից հրաժարում, կամ այդ իրավունքների չիրականացում:

Այսինքն, սոցիալական մեկուսացումը՝ դա համայնքում ինտեգրվելու, հասարակական կյանքին մասնակցելու, ինքնահարգանքի համար սոցիալական հիմքի հնարավորությունների բացակայությունն է:

Կրթությունը /ոչ միայն տարրական և միջնակարգ կրթությունը, այլ ուսումնառությունը ողջ կյանքում/ դա հիմնական հնարավորությունների ձեռքբերման հիմնական գործոնն է:

Ի՞նչ միջոցներ պետք է ծեռնարկի դպրոցը սոցիալական մեկուսացումը վերացնելու համար:

ա/ Պարզի երեխաներն իրենց դպրոցը լքում են, թե՞ նրանց այդ տեղից դուրս են հանում: Այս հարցը կանգնած է յուրաքանչյուր դպրոցի առջև, քանի որ մեկուսացումը երկու ասպեկտ ունի, որոնք արմատապես միմյանցից տարբերվում են, սակայն արդյունքները նույնն են: Առաջինը երեխաների ինքնամեկուսացումն է, բացակայությունները, դասերը բաց թողնելը, ժամկետից շուտ դպրոցից դուրս գալը և երկրորդը՝ երեխաների նկատմամբ անարդարությունը, երեխաներին ըստ ընդունակությունների և առաջադիմության բաժանելը, վատ վարքը, հաճախակի բացակայությունները և այլն որոնք երբեմն հրահրվում են դպրոցի կողմից:

Սեփական կամքով դպրոցից հեռանալը և դպրոցից դուրս մղելը միմյանց հետ փոխկապակցված են :

Համաշխարհային բանկի տվյալներով, կրթությանը հատկացված գումարների 20%-ը տարեկան ծախսվում է երկտարեցիների, բացակայությունների կամ տարվա կեսից դպրոցը թողածների վրա: Նույն դասարանում թողնելը երբեմն առիթ է դառնում դպրոցը թողնելուն, որովհետև վատ հաճախող երեխան իրեն մեկուսացված է զգում և ընկճվում է, որ պետք է կրկնի դասարանը՝ թեկուզ 1 առարկայի պատճառով: Դրա համար այդ երեխային պետք է ժամանակին օգնել, որ նա կարողանա իր հասակակիցների հետ շարունակել ուսումը:

բ/ Ըստ աշակերտի ֆինանսավորումը իրականացնի երեխաների հատուկ պահանջմունքները հաշվի առնելով, անապահով ընտանիքների երեխաներին նպատակային աջակցություն ցուցաբերելով /դասագրքեր, սնունդ, տրանսպորտ/:

գ/ Իրականացնի ուսուցում տնային պայմաններում /անհատական ուսուցում/ մատչելի դարձնի արտադասարանական աշխատանքը, կազմակերպի երկարօրյա ուսուցում, ռիսկի երեխաների հետ աշխատանք՝ նրանց դպրոց վերադարձնելու նպատակով,ստեղծի նախադպրոցահասակ երեխաների խումբ՝ այդ երեխաների համար առաջին դասարան գնալու հավասար մեկնարկային հնարավորություններ ստեղծելու նպատակով:

դ/ Միջոցներ ծեռնարկի վաղ փուլերում հայտնաբերելու առողջության կամ ուսման հետ կապված հիմնախնդիրներ և անհապաղ զբաղվի շտկողական աշխատանքներով, իրականացնի ներառական կրթություն և դպրոցական շենքն ու սոցիալական կոմունիկացիաները մատչելի դարձնի հաշմանդամ երեխաների համար, փախստական ընտանիքների երեխաներին պրակտիկ օգնություն ցույց տա, տարրական դպրոցում «երկտարեցիության» մտքից հրաժարվի, առաջին դասարանում գնահատականներ դնելուց հրաժարվի:

ե/ Ընդունի և պրակտիկայում իրականացնի ներդպրոցական այնպիսի կանոններ, որոնք բխեն ժողովրդավարության և հանդուրժողականության

սկզբունքներից, բացառի երեխաներին մականուններ, պիտակներ փակցնելը, սեռական կամ ըստ ընդունակությունների երեխաներին բաժանելը. դպրոցը լքած կամ թույլ առաջադիմություն ունեցող երեխաների նկատմամբ կիրառի «երկրորդ հնարավորությունը» տալու ճկուն քաղաքականություն:

Եվրոմիության հանձնաժողովը մշակել է սոցիալական ինտեգրացիայի քանակական և որակական տվյալներ, որոնցով երկրները կարող են որոշել որքան առաջ են անցել սոցիալական ինտեգրացիայի գործընթացում: Բերենք դրանցից մի քանիսը. Մեկ աշակերտի վրա ծախսված գումարը, կրթության մեջ ընդգրկված դպրոցահասակ երեխաների տոկոսը, կրթությունը չավարտած և դպրոցը լքած երեխաների թիվը, հանրակրթական դպրոցում հատուկ կարիք ունեցող երեխաների տոկոսը և այլն: Սակայն անհրաժեշտ են նաև որակական բնույթի տվյալներ, որպեսզի կարողանանք վերլուծել սոցիալական ինտեգրացիայի մակարդակը «հնարավորությունների» տեսանկյունից: Օրինակ,

- Երեխաները, որոնք զգում են, որ իրենց չեն գնահատում, որոնք չեն վստահում ուսուցիչներին և գտնում են, որ իրենք, ինչպես և իրենց ծնողները աշխատանք չեն գտնելու, դժվար թե շարունակեն ուսումը դպրոցում, իսկ «հնարավորությունների» բացակայությունը հետագայում ամրապնդում է նրանց հոմոգոմունքը այն մասին, որ և՛ իրենք և՛ իրենց երեխաները մնալու են խաղից դուրս վիճակում:

- Այստեղ ճիշտ կլինի տարբերություն մտցնել «կրթության» /այսինքն ի՞նչ են սովորեցնում և ի՞նչ են ուսուցանում դպրոցում/ և «ուսուցման» մեջ /դպրոցում լինելու և դպրոցի ու դասարանի կոլեկտիվին պատկանելիության տեսանկյունից/ միջև: Այս երկու ասպեկտներն էլ կարևոր դեր են խաղում հնարավորությունները աճեցնելու տեսանկյունից: Կրթության միջոցով երեխաները տիրապետում են գրագիտության, հաշվելու և այլ օգտակար հմտությունների հիմունքներին: Ուսուցումը նպաստում է երեխաների շփման, սոցիալական ու լեզվական հմտությունների ձեռքբերմանը, որն էլ ամրապնդում է նրանց վստահությունը սեփական ուժերի նկատմամբ և ընդլայնում է նրանց մտահորիզոնը:

Սոցիալական ինտեգրացիայի տեսանկյունից դպրոցի կրթական դերը տեղավորվում է աղքատության կրճատման և աշխատատեղերի ստեղծման երկարատև «տնտեսական» ռազմավարության մեջ:

Իսկ դրանց դերը որպես ուսուցման վայր շատ լավ տեղավորվում է «Իրավապաշտպան» ռազմավարությունում: Այս լույսի տակ «Լավ» դպրոցը ոչ միայն ապահովում է ուսումնական պլանի կատարումը և վերահսկում է սովորողների առաջադիմությունը, այլև ձգտում է հաղթահարել սոցիալական մեկուսացման հետևանքները՝ երեխաների իրավունքների մասին կոնվենցիայում արտահայտված սոցիալական ինտեգրացիայի մոդելը դպրոցական կյանքում վերարտադրելով:

Այսօր բոլորը, պետությունը, հասարակությունը, ծնողն ու սովորողը դպրոցի առջև դնում են կրթության որակի բարձրացման խնդիրը: Որակի սահմանումը դժվարությամբ է որոշվում. օբյեկտիվ ցուցանիշների կողքին, ասենք, նյութատեխնիկական ռեսուրսները /շենքը, սարքավորումները, դասագրքերը, դրամային միջոցները/, ուսումնական գործընթացը /ուսուցման մեթոդները, ուսումնական ծրագրերը, դասացուցակը, ուսումնական գործընթացի կազմակերպումը/, և արդյունքները/ քննությունների հաջող հանձնում, բազային և իրական օգտագործվող հմտությունները/ գոյություն ունեն նաև սուբյեկտիվ գործոններ: Ինչպես օրինակ, դպրոցի, դասարանի բարոյաբիկական մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների բնույթը և այլն/ որոնք դժվարությամբ են որոշվում. սակայն ռեալ շոշափելի որակ են կազմում, որոնցից անմիջականորեն կախված է այն հարցը.թե դպրոցում երեխան արդյո՞ք իրեն հանգիստ և պաշտպանված է զգում և արդյո՞ք կստանա այն դրական փորձը, որը կօգնի նրան ձևավորելու ինքնավստահություն և հետագա կյանքում իր ազատության հնարավորությունները արդյունավետ օգտագործելու ունակություն:

Թոմաս Համմարբերգը 1997թ իրավացիորեն նշում էր, որ «Դպրոցը պետք է արդյունավետ լինի ոչ միայն կրթական առումով: Դպրոցը պետք է բարյացակամ լինի երեխաների նկատմամբ: Երեխան իրավունք պիտի ունենա հետաքրքրասիրություն դրսևորելու, հարց տալու, պատասխան ստանալու, վիճելու և չհամաձայնվելու, ինքնիրեն ստուգելու և սխալվելու, իմանալու և չիմանալու, լինելու անմիջական և զբաղվելու ստեղծագործությամբ, հարգանք վայելելու և այլն» /8, 19/:

Այս ամենը հատկապես կարևոր են ռիսկի խմբի երեխաների համար: Տարբեր ժամանակներում դպրոցը լքած հանրապետության 95 «աշակերտների» հետ զրույցներից պարզեցինք, որ այդ երեխաները շատ հաճախ դպրոցում զգում էին, որ իրենց ներկայությունը անցանկալի է, ասում են, որ ուսուցիչները իրենց չէին սիրում, սովորեն, չսովորեն, միշտ նում «2»-ներն են ստանում. մի մասի դասղեկները, ուսուցիչները, նույնիսկ ծնողներն իրենց «փորձանք» էին համարում, որ համադասարանցիներն էլ իրենց ծաղրում էին, չէին ընդգրկում խաղերի մեջ և այլն:

Եթե դպրոցներն ավելի հանդուրժող և բարյացակամ չդառնան, ապա նման երեխաները կշարունակեն բացակայել, դպրոց չհաճախել, որը կհանգեցնի վատ առաջադիմության և դպրոցը լքելուն: Իսկ սա սոցիալական մեկուսացման տանող ամենաուղիղ ճանապարհն է:

Դրա համար կրթության որակի գնահատումը գումարների, ուսուցիչների, աշակերտների և դասագրքերի թվի պարզ հաշվումը չէ միայն, ոչ էլ նույնիսկ պետական քննությունների գնահատականների հիման վրա ուսուցման արդյունքների չափում, այլ նաև մթնոլորտ, հարաբերություններ, երեխաների ֆիզիկական ու հոգեբանական անվտանգության ապահովում:

Իհարկե «լավ» դպրոցը և «լավ» կրթական համակարգը կապահովեն ինչպես լավ կրթություն, այնպես էլ սոցիալական մեկուսացման հաղթահարումը: Կրթության, որպես «կանխարգելման» և «բուժման» դերը ուժեղանում է այնքանով, որքանով հասարակության մեջ աճում է մասնատվածությունն ու անկայունությունը: Այսօր ծնված երեխաները դժվար թե իրենց ծնողների նման ամբողջ կյանքում ապրեն այնտեղ, որտեղ ծնվել են, կամ օգնություն ստանան իրենց ընտանիքներից: Հակառակը, նրանց ապագա բարվոքությունը մեծապես կախված է այն տնտեսական «մոբիլ», մտավոր և սոցիալական հմտություններից, որոնք ձեռք կբերեն ուսումնառության ժամանակ և այն ժամանակ, երբ դեռ երիտասարդ են /սովորելը երբեք շուտ չէ/ և իրենց ողջ կյանքի ընթացքում /սովորելը երբեք ուշ չէ/:

Ժամանակակից դպրոցը պարտավոր է հարմարվել երեխաների կարիքներին թե՛ ֆինանսական և թե՛ ինստիտուցիոնալ առումներով: Դրա համար պետք է ֆինանսական առումով՝ ՀՆԱ-ի և պետական բյուջեի մեջ կրթության բաժինը ավելացնել: Ըստ աշակերտների ֆինանսավորումը շարունակել կրթության ողջ ոլորտում՝ ներառյալ ոչ պետական դպրոցները, որպեսզի կրթությունը և կրթական ծառայությունները մատչելի լինեն բոլոր երեխաներին, որտեղ էլ նրանք լինեն և ովքեր էլ լինեն: Ապահովել պարտադիր բազային կրթական ֆինանսավորման առաջնայնությունը որակյալ կրթության, հատուկ կարիքներով երեխաների և նախադպրոցական դաստիարակության մեջ ավելի շատ երեխաներ ընդգրկելու համար:

Ինստիտուցիոնալ առումով անհրաժեշտ է սոցիալական քաղաքականության և ծառայությունների հիմքում դնել երեխաներին և նրանց ընտանիքները: Երեխաներով զբաղվող նախարարությունների և պետական մարմինների համակարգման աշխատանքը բարելավել և արմատապես վերանայել:

Այսպիսով, երեխայի միջավայրի հումանացումը երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչն է: Այն կախված է նրա միջավայրում գտնվող բոլոր «մեծերի» համագործակցությունից և նրանից, թե որքանով են այդ «մեծերը» պատրաստ աշխարհը, համայնքը հարմարեցնել երեխաների կարիքներին և այն դարձնել երեխաների կյանքի համար պիտանի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Натори П. Социальная педагогика. СПб. О.Богданова 1911.
2. Монтессори М. Разум ребенка. М. 1997
3. Френе С. Избранные педагогические сочинения. М. Прогресс. 1990.
4. Пиаже Ж. Избранные психологические труды. Пер. с франц. и англ. М. МПА. 1994.
5. Дьюи Д. Школа и общество. М. Госиздат. 1924.
6. Крылова Н. Очерки понимающей педагогики. М. 2003.
7. Мир, пригодный для жизни детей. Специальная сессия Генеральной Ассамблеи ООН по положению детей. Нью-Йорк. май, 2002.
8. Thomas Hammarberg. "A school for children with Rights" N.Y. 1997.